

յամին 1283 ամի քան զվաթսուն *Ներքինիս* սպասաւորս ետես. նոյնպիսիս ունել ասէ եւ այլոց տիկնայց աւագաց. իսկ զբազմութիւն ներքինեացոյ, ասէ, ՚ի պատուհաս յանցանաց նոցին արարեալ: Բայց յաւուրս Լեւոնի թէ էին եւ թէ ոչ՝ ՚ի պատմութեան նորին ոչ յիշին դոքա:

Այլ այսքան շատ լիցի առ այսոսիկ. դարձցուք եւ յայլ տեսչութիւնս Լեւոնի:

Զ. Ղաշինք վաճառականութեան ընդ Արեւմտեայց

Ի վայելչութիւն թագաւորական շքոյ եւ համօրէն աշխարհին հարկ էր եւ աղբերս հարստութեան հնարել. առ որ՝ մի ՚ի գլխաւորաց էր դիւրել զել եւ զնուտ վաճառուց եւ վաճառականաց յերկիր իւր. եւ մեծ գործ մի եւս եւ պիտանի եղէ նորա, որպէս յառաջ քան զթագաւորելն՝ առաւել եւս յետոյ, հաստատել պնդել զաշինս բարեկամութեան ընդ մերձաւոր եւ հեռաւոր պետութեանց քրիստոնէից, եւ ընդ վաճառական ընկերհաշտութեանցն. որոց գլխաւորացն (Վենետաց եւ Գենուացոց), ՚ի սկզբան երրորդի ամի թագաւորութեանն (1201) պարգեւեաց հրովարտակօք ազատութիւն ՚ի մաքսից, տեղիս կանգնելոյ տունս եւ եկեղեցիս, օրէնս եւ իրաւունս վասն դատից, ժառանգութեանց, նաւաբեկութեանց, եւ այլն, եւ այլն. զորոց՝ եթէ կամեաք մանրագոյնս քննել, յոյժ ընդերկարեր բանս. այլ զյետնոցս, այսինքն է զդաշանց ընդ վաճառասէր ընկերութիւնս, (քանզի շահ եւ զօրաւիզն մեծ էր անտի տերութեան Լեւոնի, որպէս եւ յաջորդացն եղէ), ասելի է սակաւ ինչ, եւ զպայմանացն եղելոց կամ շնորհաց տուելոց առ նոսա ՚ի Լեւոնէ, զորս՝ գրեաթէ սակաւ փոփոխութեամբ կամ յաւելուածով՝ հաստատեցին յաջորդք իւր, մինչեւ ցկէս ԺԴ դարու. իսկ ինքն Լեւոն յարմարեաց զպայմանսն՝ ըստ նախագունիցն քան զինքն հաստատելոց դաշանց ՚ի փռանկ պետութեանց Երուսաղեմի եւ երկրին Ասորոց:

Փոքու իւրք զանազանին զաշինքն կամ արտօնութիւնք Լեւոնի որ առ Գենուացիս եւ առ Վենետկեցիս, տուեալք առաջնոցն՝ յամսեան մարտի 1201 ամի, առ պատգամաւոր նոցին Օճերիոյ Տէ Բալլոյ կամ Բալլիոյ. երկրորդացս՝ ՚ի դեկտեմբերի այնր ամի, առ պատգամաւորն Յակոբ Պատտեր, ՚ի դէմս հռչակաւոր ծերունի դքսի նոցա Ենրիկոսի Տանտոլոյ, որ մի յականաւոր որերոյ ժամանակին էր, եւ յետ սակաւ ամաց՝ նուաճող Կ. Պօլսի ՚ի Յունաց: Երկոցուն եւս պետութեանց հպատակացն Շնորհէ Լեւոն, Ա. Ազատ երթելեկ եւ բնակութիւն յերկրի իւրում. նոյնպէս եւ ազատօրէն